

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԵԳԵՐԻ ՔՆՆԵՐԳՈՐԵՆ

I.

Հայրենի եգերի որոնումներ.

Յովհաննէս Թումանեանի ստեղծագործութիւնը հետաքրքրա-
կան մի աշխարհ է ներկայացնում և՛ անձին հայեացքից ներքին հա-
կասութիւններով է խճողուած, բայց իրօք արատաւոր չեղտը տա-
նում է զէպի լրիւ ամբողջութիւն, որի մէջ ձուլուած և անհետա-
նում են բոլոր հակասութիւնները՝ ստեղծագործութեանը տալով
ներդաշնակ բնոյթ:

Ինչպէս հաշտեցնել, օրինակ, հետեւալ հոգեկան վիճակները,
որոնք հակասում են միմեանց ներքին բովանդակութեամբ.

Պանդուխտ եմ, քոյրիկ, մանուկ օրերից.

Գնում եմ զէպի մի անյայտ երկիր՝

Կըտրուած կեանքի ամեն կապերից,

Մենակ, տարագիր:

Հոգեկան ապրումն, որ արտայայտուած է այստեղ, պարզ է
ինքնին: Բանաստեղծն իրան համարում է հայրենազուրկ: Նա այդ-
պէս է եղել ոչ թէ այսօր կամ երէկ, այլ մանկութեան օրերից
սկսած: Նա մի պանդուխտ է յայտնի, շօշափելի աշխարհում: Մի
ճանապարհորդ է, որ փոքր ինչ իջել է հանդըստանալու համար,
նպատակ ունի չուելու անյայտ երկիրը: Յայտնի, ծանօթ ու մատ-
չելի աշխարհի հետ ոչ մի կապ չունի, կըտրուած է կեանքի բոլոր
կաշկանդումներից: Այդպիսի իրական, կենսական վիճակն արտա-
յայտում է հոգեկան կացութեան մէջ իրրե մենակութիւն: Բայց
կայ մենակութիւն, որ հանգստութիւն և անտարբերութիւն է բե-
րում, կայ մենակութիւն էլ, որ կրճքի տակ օձեր է սնուցանում՝
յօշոտելու և բզկատելու հոգեկան ներքինը: Բանաստեղծի մենակու-
թիւնը, ինչպէս երևում է, այս վերջին տեսակիցն է: Դա ոչ միայն
ներքին, այլ և արտաքին հալածանքի ենթարկուած մենակութիւնն
է: Բանաստեղծը տարագիր է իւր մենակութեան մէջ: Եւ այն էա-
կը, որին ուղղուած է իւր խօսքը այդ «քոյրիկը» ոչինչ չունի իւր,
մէջ նրան կապելու համար յայտնի աշխարհի հետ՝ մեռցնելով նրա
մէջ անյայտ երկրի կարօտը:

Վերևի քառեանին հետեւում են այնպիսի տողեր, որոնք այս

ու այն կողմից շեշտում են հակիրճ չորս տողի մէջ արտայայտուած ապրումները: Բանաստեղծը շատ նիւթ կ'տար ընթերցողին մտածելու, զգալու և յուզուելու, և թէ միայն նա բաւականանար այդ չորս տողով և վերլուծական աշխատանքը, իւր հոգու պրօպոումները չհասցնէր յագեցման աստիճանին: Առանց նրա ասելու էլ մենք արդէն դիտենք յիշեալ քառատողից, որ նրան հալածում են անցած օրերը, ներկայից խչելով հանգստութեան ժամերը: Ինչու— Որովհետեւ նա տարադիր է: Մենք զգում ենք նոյնպէս, որ նրա ոտքերը յոգնած պիտի լինին, հոգին— հալածական, հեռու ամեն վայելքից և բախտից, որովհետեւ նա հայրենազուրկ է, անվերջ փախչում է իւր հոգուն խորթ միջավայրից, իդուր դանդաղանքով լցնել ճգնելով իւր կեանքի, որ նոյն է թէ տանջանքի, հովիտը՝ նրան անյայտ երկիրն է գրաւում, և բնական է, որ յայտնի երկիրը նրան մի անձուկ կացութիւն պիտի թուի, ասել է թէ՝ բանտ, որի պատահաններից նա դիտում է հեռուն: Կեանքի հաճոյք, կնոջ սէր նա չունի, ամենքից զգուած է, ամենքին թողել է և գնում է դէպի անյայտը, որ խաւար է իւր անօրոշութեամբ, ու այդ բոլորը պարզ է ըստ ինքեան, և թէ մի անգամ ընդ միշտ շեշտուած է, թէ «կտրուած եմ կեանքի ամեն կապերից»:

Որքան հարազատ և մտերմական է այդ վերջին ապրումը Յովհաննէս Թումանեանի հոգուն:

Յիրաւի, նա մենակ է, կեանքում ոչինչ նրան չի գրաւում, նրա հոգին «մենաւոր վայրենու» անբովանդակութեան պատկերն է ներկայացնում: Եթէ ճիշտ լինի այդ, այն ժամանակ նրան ոչինչ չպիտի կանչի, նրա շուրջն ամենուրեք պիտի տիրէ քար անտարբերութիւն: Աւելի ես, նա չպիտի ունենայ ոչ մի շօշափելի, իրական երկրի անքուն կարօտը, նրա հոգին ոչ մի տեղ կայան չպիտի գտնի, լինելով ամեն կողմից հայրենազուրկ: Հին ծանօթներ, երջանիկ օրերի քաղցր յուշեր, սիրելի դէմքեր և այն բոլորն, ինչ որ տալիս է հոգուն «տիպ վեհութեան», գոյութիւն չեն կարող ունենալ, որովհետեւ բանաստեղծի հոգին հէնց իւր խոստովանութեամբ մանուկ օրերից ծծել է կեանքի տառապանքը, կորուստը և կակիծը, լինելով մենակ և տարադիր, կտրուած կեանքի ամեն կապերից... Աշխարհը նրա համար մի բանտ է, ինչպէս տեսանք քիչ առաջ, ուրեմն և այն փոքրիկ հաւաքական ամբողջը, որ կոչւում է հայրենի տուն, խորթ պիտի մնայ բանաստեղծի հոգուն, չունենալով իւր մէջ ոչինչ հրապուրիչ՝ անյայտ երկրի ցաւերով բեռնաւորուած նրա սրտի համար:

Բայց այդ բոլորը չինծու, մտացածին են թւում առաջին հայեացքից, երբ մենք համադրում ենք հետեւեալ բնական, ինքնաբուղիս տողերին.

Կանչում է կրկին, կանչում անդադար
Այն չքնաղ կրկրի կարօտը անքուն,
Ու թևերն ահա փրռած տիրաբար՝
Թռչում է հողիս, թռչում դէպի տուն,
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղուց կարօտով սպասում են ինձ...

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտս բնկան,
Առաջըս եկան կրճանիկ օրեր,
Արեւի դեմքեր, որ այժմ չը կան...
Ողջոյն ձեզ կեանքիս անդրանիկ յուշեր,
Արբաղսած հողիս ողջունում է ձեզ...

Ինչպէս լուծել այս հակասութիւնը, Քիչ առաջ մենք համոզուած էինք, որ դործ ունենք մի հայրենազօրիկ բանաստեղծի հետ, մի մարդու, որի հողին անհաղորդ է մնացած ամեն տեսակ հաճոյքների, իսկ հիմա մենք տեսնում ենք անյայտ կրկր օրօնողի փոխարէն մի շատ որոշ կրկրի, մի շատ պարզ կենսական շրջանի կրգչին։ Այս հարցի պատասխանը Յովհ. Թումանեանի ստեղծագործութեան խնդիրն (պրօբլեմն) է միաժամանակ։

Աւելի պարզ ձևակերպութեամբ, ուրեմն, մեր առաջ դրուած է այսպիսի մի խնդիր. ինչից են բղխում բանաստեղծի հայրենազօրիկ ապրումների նուազները և ինչպիսի ստեղծագործական ուղիներով (օրնումներով) են նրանք հասցնում հայրենի տան, հայրենի օջախի օրհներգին։

Յովհ. Թումանեանի օրնումները գնում են դէպի առաջ հողեկան ինքնալրացման գծով։

Այս վերջին հանգամանքը կրպարղութի, եթէ մենք մի փոքրիկ, բայց ընդհանուր նկատողութիւն անելու լինինք բանաստեղծի ստեղծագործական կարողութեան մի բնորոշ կողմի վրայ։ Այդ այն է, ինչ որ մենք վերելում պայմանական կերպով շեշտեցինք, ասելով թէ նրա հայրենազօրիկ նուազները չինձու, մտացածին են թւում, համեմատուելով հայրենի եղերքի ինքնարուղիս և բնական օրհներգի հետ։

«Պանդուխտ եմ, քայրիկ» օտանաւորը մի ձգձգւած, թոյլ և անյաջող դործի տպաւորութիւն է անում, առաջին քառեակի մէջ արտայատուած բովանդակութիւնը քաջքշւում է և մի սեղմ չորս տողի փոխարէն ստացւում են քսան և ութ աւելորդ տողեր, որոնք ոչինչ չունին աւելացնելու անդրանիկ քառատողի հիմնական ապրումներին։ Հայրենի եղերքի դրուատումների մէջ բանաստեղծը ինքնարանադատման այդպիսի ճիգեր չունի։ Այդտեղ ստեղծագործու-

Թիւնը կատարուած է բանաստեղծելու իսկական եղանակով, այսինքն տրուած է մի շարք ապրումներից ամենաէականի հօր շնոր, Թողնելով ընթերցողին երկրորդական ապրումների համախմբելն էականի շուրջը, բանաստեղծի հետ միասին ստեղծելու Թովիչ հարկադրանքով: Էական ապրումն այդպիսով գառնում է մի խորհրդանշան, որի տակ գալիս միանում են մեր ներքին այն ապրումները, որոնք դէպի լոյս են կոչւում բանաստեղծի հօր շնոր կամ նուագի ազդեցութեամբ: Եւ այն ժամանակ մենք յուզւում ենք, որովհետեւ մեզ գրաւում է մեր ներքին աշխարհից ցրուած ապրումների համախմբումն մի խորհրդանշանի տակ, որ մենք չենք կարողացել ստեղծել և ստացել ենք պատրաստի կերպով բանաստեղծի առաջնորդի ջանքով:

Ի՞նչ է հետևում այդ սողերից: Միթէ այն, որ Յովհ. Թումանյանի այն բոլոր նուագները, որոնք ներշնչուած են հայրենադրկութեան ոգով՝ միանգամայն աւելորդ են և նրա ստեղծագործութեան արասն են կազմում: Մի այդպիսի կարծիքով բաւականա՞նալ նշակում է բնաւ չհասկանալ բանաստեղծի ստեղծագործութեան ներքին էութիւնը, նրա ամբողջական կառուցուածքը: Իսկական բանաստեղծների ստեղծագործութիւնը մի լիակատար և անհրաժեշտ միութիւն է ներկայացնում, ամեն մի նուագ երգչի ներշնչման մի տարրն է, և թէ բնական կերպով կցորդուած է նրա հոգեկան համակրանքների և տենչերի հետ:

Յովհ. Թումանյանի հայրենադրկութեան նուագները թէպէտ և առանձնակի և ընդհանուր կապից անճառ դիտելով, մասնաւոր հակասութեան և աններդաշնակութեան գրոշմն են կրում իրանց վրայ, բայց անհրաժեշտ որոնումների մի շարք են ներկայացնում նրա հայրենի եղերքին հասցնող գիւտի ճանապարհին: Բանաստեղծի անկեղծ խանդավառութիւնը հայրենի եղերքի հանդէպ մեզ համար կըմնար մութն ու անհասկանալի, և թէ մենք չտեսնէինք և չզգայինք այն բոլոր տանջանքները, որ նա կրում է իբրեւ հայրենադուրի, իբրեւ մենաւոր և պանդուխտ, տարագիր և բանտարկեալ էակ:

Բախտի մի ինչ որ քմահաճօքով նա զրկուել է իրական ապէս իւր սիրած հայրենի եղերքին ապրելու հնարաւորութիւնից, նա չըջապատուել է այլ կենսական պայմաններով, այլ մթնոլորտով ու մարդկանցով, այլ բնութեամբ ու արժէքներով: Նա չի կարողանում տանել նոր հայրենի եղերքը, որ իւր հոգու համար չէ ստեղծուած, և սկսում է հոգեպէս տանջուել, որոնելով կորցրածը և մտովին ապրելով նրա վաղեմի Թովչանքներով:

Աւելի պարզ ասենք այդ բոլորը — բանաստեղծը Գիւղը թողել է և եկել Քաղաք:

Բայց դա մի սովորական դադթ չէ, դա երկու տարբեր քա-

դաքակրթութեան ընդհարումն է, որ ողբերգական կերպով ապրում է բանաստեղծի հոգին: Հասարակական կառավարան Հենչէլն էլ այդպիսի մի ընդհարման հոգեբանական պատկերացումն է. նա ևս թողել է գիւղը և եկել քաղաք: Գիւղն այլ արժէքների շրջան է ներկայացնում, իսկ քաղաքը—այլ: Մէկ տեղ կառավարան Հենչէլն ունէր ամուսն կառն, նա իւր հարազատ միջնորդութեամբ էր գտնւում, շրջապատւած համակիրներով, իւր հոգուն մտերիմ տնտեսական և բարոյական կեանքով: Քաղաք տեղափոխուելով՝ նա դրկւում է կենսական հաստատուն յենարանից, խորթ միջնորդարի մէջ է ընկնում, շրջապատւում ծառի միջավայրով, իւր սրտին և մաքին հակառակ ու ներհակ տնտեսական—բարոյական կեանքով: Նրա մէջ տեղի է ունենում մի մեծ յեղաշրջում: Հին հասկացողութիւնների շէնքը ճարճատելով քայքայւում է, նոր հասկացողութիւնները յապաղում են հանդէս գալ, այն անցողիկ, տատանող վիճակը նա չի կարողանում լուծել, ելք է փնտրում և գտնում է ինքնասպանութեան մէջ:

Նման մի վիճակի մէջ է ընկել Յովհ. Թումանեանը: Ի հարկէ, երկու տարբեր քաղաքակրթութեան ընդհարման և հոգեկան տանջանքի նմանութեան տեսակէտից կնք մենք մօտենում երկուսին էլ:

Բանաստեղծի գիւղական կենսահայեցողութեամբ տոգորուած հոգին քաղաքային միջավայրում տառապում է: Ամեն բան նրան ատելի է և մերժելի, նա տոչորւում է և սրնում այն վայրը, ուր հանգստանալ կարող է իւր վերաւոր հոգին: Նա ծագրում, արհամարհում է այն բոլորն, ինչ որ յատուկ է նոր հայրենի եղերքին—քաղաքին, միաժամանակ սքանչանում և դրուատում է: Ի՞նչով է սքանչանում և ի՞նչ է դրուատում: Դա իւր սրնածն է—հին հայրենի եղերքը, ուր նա սնուել ու մեծացել է հոգեպէս և ֆիզիքապէս: Դա այն ասպատանն է, ուր պէտք է անդորրութիւն գտնի նրա ստեղծագործող հոգին՝ ողորութեան հիւթ քաղելով և ապրելով բազմակողմանի կերպով:

(Կը շարունակուի):

Ա. Տէրտեան